ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԾՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 12 հունվարի 2019թ.

ժամը 14:00

Մասնակցում էին՝

Նախագահ՝ Վարուժան Մելքոնյան

Անդամներ՝ Հայկ Հովհաննիսյան,Կարապետ Քարտաշյան

Քարտուղար՝ Նելլի Աբովյան

**1.Էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետի և սկսելու մասին**

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԾՁԲ-19/1» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 08.02.2019թ-ին ժամը 12:00-ին, իսկ էլեկտրոնային աճուրդը սկսվել է 11.02.2019թ.-ին ժամը 12:00-ին:

**2. Գնման հայտով սահմանված գնման առարկաների քանակը և գինը.**

| Չափաբաժնի h/h | Անվանումը | Հաստատված քանակը | Նախահաշվային գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայություններ | 1 | 4000000 |

**3. Էլեկտրոնային աճուրդի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

3.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԾՁԲ-19/1» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդին մասնակցել է թվով 3 մասնակից.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը /անունը/ | էլ. հասցե |
|---|---|---|
| 1 | «ԴԱՎ-ՀԱԿ ՍՊԸ» ՍՊԸ | gegamsukiasyan@mail.ru |
| 2 | «Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ | desinfection.c@mail.ru |
| 3 | «ԷԿՈԴԵԶ» ՍՊԸ | ecodez@ymail.com |

**4. Բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին**

4.1 Հրավերով սահմանված կարգի պահանջներին համապատասխան Դիմում-հայտարարություն կազմել և ներկայացրել են ներքոհիշյալ Մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը /անունը/ | ՀՎՀՀ |
|---|---|---|
| 1 | «ԴԱՎ-ՀԱԿ ՍՊԸ» ՍՊԸ | 01278892 |
| 2 | «Երևանի կանխարգելիչ ախտահանում » ՓԲԸ | 00402063 |
| | ԷԿՈԴԵԶ ՍՊԸ | 01241173 |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

**5. Գնման գործընթացը ժամանակավորապես կասեցնելու մասին.**

Հիմք ընդունելով գնման ընթացակարգի մասնակից՝ «Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ-ի գրությունը հասցեագրված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԾՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին այն մասին, որ 2019թ.-ի փետրվարի 11-ին, ժամը 12:00-ին eauction.armeps.am համակարգի անսարքության պատճառով հնարավոր չի եղել մուտք գործել համակարգ և մասնակցել աճուրդին (սույն արձանագրությանը կցվում են ՀՀ «Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ-ից ստացված գրությունները), գնահատող հանձնաժողովը որոշում կայացրեց՝

ժամանակավորապես կասեցնել «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԾՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատումը՝ մինչև ՀՀ պետական գնումների գործընթացի լիազոր մարմնի՝ ՀՀ ֆինանսների նախարարության, կողմից համապատասխան ցուցում կամ պատասխան ստանալը, բայց ոչ ուշ քան 19.02.2019թ.:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին.**

6.1. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից համապատասխան ցուցում կամ պատասխան ստանալու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում, ք.Երևան, Արշակունյաց-63 հասցեում:

6.2 ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մինչև 19.02.2019թ.-ը համապատասխան ցուցում կամ պատասխան չստանալու դեպքում, հաջորդ նիստը հրավիրել 19.02.2019թ.-ին ժամը 14:00-ին ք.Երևան, Արշակունյաց-63 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**Հանձնաժողովի նախագահ՝** ____________________ **Վ. Մելքոնյան**

**Անդամներ՝** ____________________ **Կ. Քարտաշյան**

____________________ **Հ. Հովհաննիսյան**

**Քարտուղար** ____________________ **Ն. Աբովյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

« ԵՐևԱՆԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ

ԱԽՏԱՀԱՆՈՒՄ »

ՓԲԸ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

«ЕРЕВАНИ КАНХАРГЕЛИЧ

АХТААНУМ »

ЗАО

Հասցե՝ Մ. Խորենացի, 160

Հեռ. 57-35-90

Адрес: М. Хоренаци, 160

тел. 57 – 35- 90

Address: M. Khorenatsi str. 160

Tel.: 57-35-90

11 - 02 / 15

„ 12 „ փետրվարի „ 2019 թ. г.

12.02.19թ

011800/03

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Ա. ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆԻՆ

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Ջանջուղազյան

Հայտնում եմ այն մասին, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից հայտարարված ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԾՁԲ-19/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդը պետք է մեկնարկեր 11.02.2019թ-ին ժամը՝ $12^{00}$: 'Երևանի կանխարգելիչ ախտահանում' ՓԲԸ-ն, որը սահմանված կարգով դիմում-հայտարարություն էր ներկայացրել նշված աճուրդին մասնակցելու համար, սահմանված ժամին eauction.armeps.am համակարգի անսարքության պատճառով հնարավորություն չի ունեցել մուտք գործել համակարգ և մասնակցել աճուրդին:

Նշեմ, որ այդ ժամանակահատվածում բազմիցս փորձել ենք կապ հաստատել 'Թեժ գիծ' ծառայության հետ առաջացած խնդիրների մասին հայտնելու համար, սակայն մեզ չի հաջողվել կապ հաստատել:

Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ խնդրում եմ ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ընթացակարգը չեղարկելու և կրկին հայտարարելու կամ էլեկտրոնային աճուրդը կրկին կազմակերպելու և անցկացնելու ուղղությամբ:

ՏՆՕՐԵՆ ՄԵԼՍԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
« ԵՐևԱՆԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ
ԱԽՏԱՀԱՆՈՒՄ »
ՓԲԸ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
«ЕРЕВАНИ КАНХАРГЕЛИЧ
АХТААНУМ »
ЗАО

14 - 02 / 15
„ 12 „ փետրվարի „ 2019 թ. г.

Հասցե՝ Մ. Խորենացի, 160
Հեռ. 57-35-90
Адрес: М. Хоренаци, 160
тел. 57 – 35- 90
Address: M. Khorenatsi str. 160
Tel.: 57-35-90

ՀՀ ԱՆ ՔԿԾ – ԷԱՃԾՁԲ-19/1 ծածկագրով
էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին

Հայտնում եմ, որ 11 .02. 2019թ. ժամը 12-ին հայտարարված ՀՀ ԱՆ ՔԿԾ – ԷԱՃԾՁԲ-19/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդը չի կայացել կայքի խափանման միջոցով, որի մասին գրավոր տեղեկացրել ենք նաև ՀՀ Ֆինանսների նախարարությունն:

Խնդրում եմ գնումների ընթացակարգը կասեցնել մինչև Ֆինանսների նախարարությունից գրավոր պատասխանի ստացումը:

ՏՆՕՐԵՆ ՄԵԼՍԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ